

2016 թվականի օգոստոսի 2-ից 7-ը երկրորդ անգամ Վեսպրեմում տեղի ունեցավ Auer Violin Festival (Աուեր Զուբակի միջազգային փառատոնը), որը հարգանքի տուրք է մատուցում ջութակահար Աուեր Լիպոտի աշխատանքին և կյանքին: Աշխարհահռչակ ջութակահարը, ուսուցիչը (1845-1930) ծնվել է Վեսպրեմում:

Առաջին Auer Violin Festival (Աուեր ջութակի փառատոնը) տեղի է ունեցել 2015 թվականի օգոստոսի 4-ից 9-ը՝ ի հիշատակ Վեսպրեմում ծնված ջութակահար և երաժշտության ուսուցիչ Լիպոտ Աուերի:

Փառատոնի նպատակն է տարեցտարի Վեսպրեմ բերել միջազգային և Հունգարիայի երաժշտական աշխարհի նշանավոր գործիչներին: Կատարումները կարելի է լսել մի քանի բեմերում, ժանրերը տարբեր են՝ դասականից մինչև ջազ, կամերիային երաժշտությունից մինչև նվագախմբային համերգներ:

Փառատոնի շրջանակներում օգոստոսի 6-ին 20:00-ին Հանգվիլայի մեծ դահլիճում համերգ ունեցան նաև աշխարհահռչակ հայ ջութակահար Սերգեյ Խաչատրյանը և դաշնակահարուհի Լուսինե Խաչատրյանը Մենդելսոն կամերային օրկեստրի նվագակցությամբ:

Մենդելսոն կամերային նվագախումբը ստեղծվել է Բարտոկ Պաստորի մրցանակակիր առաջին ջութակ Կովաչ Պետերի գլխավորությամբ հարուստ երաժշտական պատմություն ունեցող Վեսպրեմ քաղաքում: Նվագախմբի նվագացանկը բազմառձ է՝ բարոկկոյից մինչև դասական, 20-րդ դարի ամենանշանավոր ստեղծագործություններից մինչև ժամանակակից երաժշտություն:

Նվագախումբը մեծ ճանաչում ունի Հունգարիայի սահմաններից դուրս նույնպես. մեծ թվով համերգներ է ունեցել զրեթե Եվրոպայի բոլոր երկրներում, ինչպես նաև Հյուսիսային, Կենտրոնական և Հարավային Ամերիկայում: Նրանք համերգներ են ունեցել այնպիսի մեծ ճանաչում ունեցող համերգասրահներում ինչպիսիք են Միլանի Վերդի նվագասրահը, Բուենոս Այրեսի Տեատրո Կոլոն, Նյու Յորքի Միացյալ Ազգերի Պալատը և մի շարք այլ համերգասրահներ:

Մի շարք համերգներ են ունեցել ճանաչված ջազ, նույնիսկ փոփ երաժիշտների հետ: 2010-ին իր արտիստիկ աշխատանքի համար Մենդելսոն կամերային նվագախումբը արժանացել է Բարտոկ Պաստորի մրցանակին:

Նվագախումբը ղեկավարում էր դիրիժոր Մադարաշ Գերգեյը: Մադարաշ Գերգեյը ծնվել է 1984 թվականին Բուդապեշտում: Մագիստրոսական աստիճան ստացել է Բուդապեշտի և Վիեննայի Երաժշտական Ակադեմիայում՝ որպես ֆլեյտիստ և դիրիժոր: Բացի Հունգարիայից աշխատում է Եվրոպայի մի շարք երկրներում՝ Ֆրանսիա, Բելգիա, Լեհաստան, Անգլիա, Գերմանիա: Աշխատում է այնպիսի նվագախմբերի հետ, ինչպիսիք են՝ Deutsche Symphonie Orchester Berlin, Munich Chamber Orchestra, BBC Philharmonic and Symphony Orchestras, Royal Scottish National Orchestra and the Scottish Chamber Orchestra և այլն:

